իսկ աջից՝ դարձեալ Սինկոտ, Վարիխանա, Բեղաուլ, Նադիր-օղլի եւ Իրսա առ-բը, որոնք ոռոդում են համանուն գեղերը իրենց պարագաներով։

Արդվինի շրջապատի բոլոր գեղերը խա-լամացածներ են. Թուրք բոլորովին չկան։

ԺԲ.

Մուրղուլի հովիտը եւ Դեւիս Վտակի Աւազանը։

Մուրղուլ վտակն սկսւում է Քիւքիւրդ լեռներից, ուղղւում է հարաւից-հիւսիս, ապա հիւսիս, հիւսիսային արեւմուտք եւ խառնւում է Ճորոխից ձախից։ Մուրղուլի հովիտը շատ ընդարձակ է, շուրջ 20 վերստ երկարութիւն ունի, բազմաթիւ առուակներ աջից եւ ձախից, որոց ջրբաժան գիծն է Պարխալ լ. շ. Քիւքիւրդ, Դէմիր-Կափու, Ահար-բաշի, Բառնալիք-Թէփեսի, Փատա-ջուր լ-բը մինչեւ Սեւ Ծովի ափերը։ Մուր-ղուլի եւ Խատիլայի մէջ են Կերցին եւ Տրիալ լեռները։ Ինչպէս Խատիլայի նոյնպէս Մուրղուլի լեռները անտառապատ են։

Մուրղուլ վտակը թափւում են Կվախ-չիտ, Էգրէ, Քեմաբլի, Գավիաձորտ, Բու-դիէք, Ծղալկա եայլաների առուները. ապա անցնում է Շուվալի, Ալաջա, Մուրադ-Բո-ղազ, Զամուրլի, Ինեգլի, Մագարա-Թիքմա գեղերից, միացնելով նրանց առուները իր հետ։ Հովտում՝ Մուրղուլի վտակի աջ ու